

ԿՐՈՆԱԿԱՆ

ՍԿԻԶԲԼ

(Թարգմանութիւն Գր. Պետրովից).

«Գնացէք առաւելապէս Խորայէլի տան
կորած ոչխարների մօտ» (Մատք. Ժ. 6.)։

Շրջում էր Յիսուս հրէից քաղաքներն ու գիւղերը՝
քարոզելով Աստուծոյ արքայութեան աւետարանը։ Ամեն
տեղ ժողովուրդը խառն բաղմութեամբ նորա շուրջնէր
հաւաքւում։ Երուսաղէմի տաճարի գաւթում, լերան վրայ,
կանաչ արտերում, լճի ափին հարիւրաւոր և հազարաւոր
ունկնդիրներ ագահաբար հետեւում էին նորա ամեն մի
խօսքին։

Մարդիկ յոգնել էին կեանքի անարդարութիւնից։
Նրանք կարօտով դիմում էին դէպի Աստուծոյ արդարու-
թիւնը, ինչպէս սենեակի խեղդուկ օդի մէջ փակուածը
կը դիմէ դէպի գրսի թարմ և մաքուր օդը։ Եւ Քրիստոսի
խօսքը այնպիսի սիրով էր լցուած, այնպիսի ուրախութիւն
էր խոստանում կեանքի բարեփոխման միջոցով, որ մարդ-
կանց համար այդ խօսքը հացից շատ աւելի թանկ էր։

Դպիրներն ու փարիսեցիներն արհամարհում էին ժո-
ղովրդին։ Նրան տիմար էին համարում և անընդունակ
Աստուծոյ կամքը հասկանալու, ուստի և չէին ուսուցա-
նում նրան։

Փրկիչը տեսնելով ագահաբար իրեն լսողների բազ-
մութիւնը, ասում էր, որ մարդիկ ծարաւի են արդարու-
թեան, միայն չգիտեն թէ ուր դիմեն, պէտք է մօտենալ
ժողովրդին, նա տգէտ է, որովհետեւ նրան բարի խօսք
ասող չկայ։ Ժողովուրդը անհովիւ հօտի պէս երեսի վրայ
է թողնուած։ Մարդիկ Աստուծոյ խօսք չեն լսում, իրենց

մասին ոչ մի տեղից հօգացողութիւն չեն տեսնում, օտարացած են միանգամայն և թափառում են որպէս անհովիւ ոչխարներք Բայց ահա հնչում է Քրիստոսի ձայնը, երկնքի արքայութեան խօսքը լաւում է քաղաքներում ու դիւղերում և ժողովուրդը գիմնում է դէպի մեծ վարդապետը։ Նորա շուրջն են խոնում մեծամեծ խմբերով, տասնեակ վերստեր գնում են Նորա յետեից, որպէս զի մէկ էլ լսեն Նորան և յափշտակուած Նորա խօսքերից՝ մոռանում են նոյն իսկ ուտելու մասին։

Այս բոլորը տեսնելով՝ խղճում էր Յիսուս ժողովրդի վրայ և ասում իւր աշակերտներին. «Հունձը շատ է, իսկ մշակներ սակաւ։ Սղաշեցէք հնձի Տիրոջը, որ մշակներ ուղարկէ իւր հնձի համար» (Մատթ. թ. 38)։

Բայց մինչև մշակների դալը չի կարելի թողնել, որ Աստուծոյ արտի ցորենը փչանայ. Հատիկները թափւում են, պէտք է արտը հնձերը Ռւստի և կանչելով իւր տասներկու աշակերտներին՝ Յիսուս ուղարկեց նրանց, պատուիրեց ու ասաց. «Հեթանոսների երկիր չգնաք և Սամարացոց քաղաք չմտնէք։ Այլ գնացէք առաւելապէս Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ Եւ երբ գնաք, քարոզեցէք և ասացէք, թէ մօտեցել է երկնքի արքայութիւնը» (Մատթ. ժ. 5—7)։

Վերջում Յիսուս բաժանուելով իւր աշակերտներից՝ կասէ նրանց. «Գնացէք սյսուհետեւ քարոզեցէք բոլոր հեթանոսներին . . . ովզորեցրէք նրանց պահելու այն ամենը, ինչ որ պատուիրեցի ձեզ» (Մատթ. իլ. 19—20)։

Իսկ սկզբում նա խստութեամբ սահմանափակում է աշակերտների քարոզութեան շրջանը. «Հեթանոսների և սամարացիների մօտ չգնաք, այլ գնացէք միմիայն Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ»։

Քրիստոսի աւետարանը ամբողջ աշխարհին քարոզելու գործը շատ մեծ գործ է. նա պահանջում է հոգու մեծ յատկութիւններ, երկար նախապատրաստութիւն։ Այդտեղ միմիայն խօսք չէ հարկաւոր, այլ անհրաժեշտ է անձնուրաց սէր, անօրինակ հեղութիւն, Փրկչի բոլոր պատ-

ու էրները գործով ցոյց տալու կարսղութիւն։

Չաք սրտերը փափկացնել կարելի է միմիայն կաթո-
գին սիրով։ Այլապէս լոկ սիրոյ քարոզը առանց համապա-
տասխան գործի կարող է միամիայն զայրոյթ առաջացնել
և մարդկանց չարութիւնը գրգռել։

Քրիստոսի առաքեալները, այն ժամանակ, երբ առա-
ջին անգամ Յիսուս նրանց ուղարկում էր, գեռ այդպիսի
պատրաստութիւն չունէին հեթանոսների և սամարացի-
ների մէջ, անձնուրաց սիրով և կատարեալ խոնարհու-
թեամբ Քրիստոսի ճշմարտութիւնը քարոզելու համար
երբ արել ծագում է, միանգամից չէ լուսաւորում աշ-
խարհը, այլ սկզբում բարձրութիւնները, ապա ամբողջ
երկիրը, իսկ յետոյ՝ նաև խորութիւններն ու ձորերը։
Այդպէս էլ Քրիստոսի ճշմարտութեան լոյնը հետղնետէ
էր լուսաւորում առաքեալների սրտի ամեն կողմերը,
նրանց հոգու բոլոր խորքերը։ Ակղքներում Փրկիչ իւր
աշակերտների հետ ունեցած խօսակցութեան միջոցին յա-
ճախ ստիպուած էր լինում երկար կանգ առնել և մի առ-
մի հասկացնել նրանց։ Առաքեալները յաճախ զինում էին
իրար հետ առաջնութեան համար։ Հարցնում էին թէ ինչ
վարձ պիտի ստանան իրանք, որ ամեն ինչ թողել են և
հետեւ Քրիստոսին։ բռնկուում էին, սամարացոց անհիւ-
րնկալ գիւղը ապրելու համար ազօթել էին ուղում, չէին
ընբռնում անձնազոհութեան անհրաժեշտութիւնը մարդ-
կանց փրկութեան գործի համար, ասում էին Փրկչին։
«Ճէր մի անիր այդ (այսինքն մի գնալու դէպի խաչ), ինա-
յիր Քեզ»։ Ուստի և Յիսուս սահմանափակում է նրանց
քարոզութեան շրջանը՝ ասելով, «Հեթանոսների երկիր
չգնաք և սամարացոց քաղաքը չմտնէր»։ Խողերի հետ խօ-
սելու համար առանձնապէս զօրեղ ձայն պիտի ունենալ,
ծանր վէրքերը առանց ցաւի բուժելու համար շատ քըն-
քոյշ ձեռքեր պիտի ունենալ։ Առաքեալները դեռ եւս այդ-
պատրաստութիւնը չունէին։ Նրանց խօսքի ու գարմունքի
մէջ յաճախ խստութիւն ու բարկութիւն էր, նկատւում։
Այդպիսի վարմունքը ոչ թէ կը գրաւէր, այլ աւելի ևս կը

հեռացնէր հեթանոսներին ու սամարացիներին նոր վարդապետութիւնից Բոլորովին այլ բան էր ներկայացնում հրէից ժողովուրդը։ Այստեղ երկիրը տատասկոտ և խոսպան չէր, այլ պատրաստի հող կար, որ ցանքի էր սպասում։ Մարդիկ տանջւում էին հոգեոր սովից։ Ամբոխը մոլորուած ոչխարի պէս այս ու այն կողմն ընկած՝ փրնտում էր, թէ ով ցոյց կը տայ իրեն կեանքի ճանապարհը։

Նայեցէք ժողովրդի այս ամբոխին, որ ամենուրեք մեր շուրջն է խռնում, ասում էր Փրկիչ իւր աշակերտներին։ Զէ որ սոքա Աստուծոյ արտերն են, որոնք վազուց հասել և հնձի են սպասում։ Նրանք պատրաստ են Տիրոջ շտեմարանների համար. մնում է միայն գնալ ու ժողովել։ Գնացէք դուք այդ մոլորուած ժողովրդի մօտ, աւետեցէք փրկութեան խօսքը Խորայէլի տան կորած ոչխարներին։

Առաքեալները սկզբում դեռեւս պատրաստ չէին նոյն իսկ հրէաններին ցոյց տալու կեանքի ճանապարհը։ Նրանք շատ բան դեռ չգիտէին. յետոյ միայն իմացան։ Ուստի և սկզբում Յիսուս միայն այսչափ է պատուիրում նրանց, երբ որ գնաք, քարոզեցէք, թէ մօտեցել է երկնքի արքայութիւնը, այսինքն նրանք պէտք է քարոզէին ոչ թէ Երկնքի արքայութիւնը, որ իրանք դեռ լաւ չէին ըմբռնել. այլ մի միայն պիտի աւետէին, թէ Երկնքի արքայութիւնը մօտեցել է, թէ հնարաւոր է կեանքը քարեփոխել, թէ չարիքի և տանջանքի դէմ միջոց դտնուած է։ Իսկ եթէ մէկը ուզում էր իմանալ, թէ ինչ է Երկնքի արքայութիւնը և ինչպէս պէտք է ձեռք բերել այդ, թող դիմէր հէնց իրեն՝ ուսուցչին։ Աշակերտների գործն էր առժամանակ բոլոր ճշմարտութեան ծարաւիններին աւետելու, որ ճշմարտութիւնը արդէն երկացել է Երկրի վրայ և որ այդ ճշմարտութիւնը հէնց ինքը Յիսուս Քրիստոսն է։ Նոր կեանքի առաւօտ էր բացուել, ճշմարտութեան արեգակը ծագել էր Երկրի վրայ, իսկ հաղարաւոր մարդիկ հեծում էին մուժ և խօնաւ նկուղների մէջ, Յիսուս ուզարկում էր իւր աշակերտներին այդ մարդկանց մօտ՝ դէպի լոյս կոչելու համար։

Այդ տեսակ մի գործ համապատասխան է մեր ուժերին և պարտաւորական մեզ համար։ Գնալ աշխարհի հեռաւոր ծայրերը, քարողել աւետարանը հեթանոսներին, ամեն ոք չի կարող։ Շատերը չունին հոգու այդչափ ոյժ, հարկաւոր ջերմութիւն։ Սակայն Աւետարանի կոչի խօսքերով գիմել իւր մերձաւորներին, հայրենի հօտի մոլորուածոչարներին, այդ կարող է անել մեզնից իւրաքանչիւրը։ Եթէ մենք գեռ շատ հմուտ չենք Աւետարանին, այդ արգելք լինել չի կարող։ Առ այժմ գեռ մի բացատրիր Աւետարանը։ Գու մի միայն ցոյց տուր մարդկանց այդ, ասանրանց, «այստեղ է ճշմարտութիւնը, այստեղ է կեանքի բոլոր կնճռոտ խնդիրների լուծումը»։ Աւետարանը ինքը ցոյց կտայ իւր ազդեցութիւնը, գու մի միայն տար մարդկանց դէպի Աւետարանը։ Վերջում, ընդհանուր ուժով կամ ամեն մէկս առանձին, մենք ամենքս էլ կըմբռնենք Աւետարանի միտքը, իսկ այժմ քանի դեռ այնքան քիչ է ծանօթ Աւետարանը, կրկնենք անդադար։ «մինչև որ կողմնացոյց չունենաս ձեռքիդ, կը մոլորուես և ճանապարհը չես գտնիլ. մինչեւ որ Աւետարանը չվերցնես, չես կարող կեանքի մոլորութիւններից դէպի ճշմարտութեան ճանապարհը դուրս գալ»։

Աւետարանի ընթերցումը սկիզբն է նոր կեանքին։ Գնանք մեր տան կորած ոչխարների մօտ և շրջելով քարողենք ու ասենք, թէ «մօտեցել Երկնքի արքայութիւնը»։ Այդ մենք ամենքս կարնդ ենք անել և պարտաւոր ենք անելու»։

Մամբռէ վարդապետ.